ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28, 14.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ

Պատվիրատու՝ Ջրային կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա»

Գնման առարկան՝ ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 2-րդ չափաբաժնի մասով դադարեցնել 02.02.2022թ. թիվ 5 արձանագրությունը և «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ին կոնսորցիումով ճանաչել 2-րդ չափաբաժնի ընտրված մասնակից:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ֆ. ՄԱՆԳՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝ «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ից
Հասցե՝ ք Երևան, Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Օզանովի փ., շ 78/14
Գրանցման համար՝ 290.110.1136195 - 2020.07.09,
ՀՎՀՀ 01303697
Տնօրեն՝ Արսեն Բարսեղյան
Նույն բարտ՝ 012815049, տրվ. 24.06.2020թ., 001
vahagn.lawyer@gmail.com

Պատվիրատու՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե
Հասցե՝ Երևան 0010, Վարդանանց փող., 13ա

Գնման ընթացակարգի առարկան և ծածկագիրը՝ ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրման աշխատանքների նպատակով ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերում, ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա

ՀՀ ... մարզ
ՍԿ 11147
5 14 03 2022թ.

14.03.2022թ.

ԲՈՂՈՔ

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը դադարեցնելու և հանձնաժողովին որոշում ընդունել պարտավորեցնելու պահանջի մասին

I. Գործի նախապատմությունը և բողոքի փաստերը

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գնահատող հանձնաժողովը /այսուհետ՝ նաև՝ հանձնաժողով/ հրապարակել է հրավեր և հայտարարություն՝ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով, ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրման աշխատանքների նպատակով ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով /այսուհետ՝ նաև՝ հրավեր/:
2. Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ (այսուհետ՝ նաև՝ Բողոքաբեր) և Նարսեր Շին ՍՊԸ (Գործընկեր 2) կոնսորցիումով 13 հուվարի 2022թ. ներկայացրել է հայտ և մասնակցել է Ջրային կոմիտեի կողմից հայտարարված ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով բաց մրցույթին:

3. 20 հունվարի 2022թ.-ին գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրություն N2-ով ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանությունների շտկման առաջարկի հիման վրա անհամապատասխանությունները շտկվել են նշված ժամկետում,
4. 25 հունվարի 2022թ. ին գնահատող հանձնաժողովի նիստի N3 Արձանագրության համաձայն՝ տրվել է գների նվազեցման շուրջ բանակցությունների իրականացման հրավեր, որը պետք է տեղի ունենար 27 հունվարի 2022թ.-ին՝ ժամը 11:30, սակայն չի կայացել:
5. 27 հունվարի 2022թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստի N4 Արձանագրության համաձայն՝ կրկին գների նվազեցման շուրջ բանակցությունների հրավեր, որը պետք է տեղի ունենար 02 փետրվարի 2022թ. ժամը 11:30 : Արձանագրության մեջ միաժամանակ նշվել է, որ Հայ գերմանական Արազեն ՀՁ ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման;
6. 02 փետրվարի 2022թ.-ի նիստին կոնսորցիումով մասնակցել է Բողոքաբերը և գնահատող հնձնաժողովի բացման նիստի N5 Արձանագրություն համաձայն որի Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ (Գործընկեր 1) և Նարսեր Շին ՍՊԸ (Գործընկեր 2) կոնսորցիումը N 1, 3 և 4 Չափաբաժիններով ճանաչվել է ընտրված մասնակից:
7. 02 փետրվարի 2022թ.-ի նիստի արձանագրության մեջ 2-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովը սխալ է գնահատել արդյունքները և Բողոքաբերը չի ճանաչվել ընտրված մասնակից:
8. 2-րդ չափաբաժնի մասով Բողոքաբերը առաջարկել է 34.658.000 ՀՀ դրամ, այլ ոչ թե 34.678.000 ՀՀ դրամ, այսինքն՝ ընտրված մասնակից Ֆլորա Էներջի ՍՊԸ-ից ցածր գին:
9. Նիստերը ձայնագրվել են, որին արձանագրվել է կողմերի առաջարկները:

II. **Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները**

Գտնում ենք, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. « 1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 40.-րդ կետի համաձայն. « Հայտերի բացման և գնահատման նիստում՝

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամրողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ

ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի.

6) խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականն ամենաբարձրն է: Մասնակիցներին տրված գնահատականների հավասարության դեպքում, կամ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով նվազագույն գնահատական ստացած բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները).

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի բարտուղարը նվազագույն գնահատական ստացած բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը.

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը.

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցները.

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ամենաբարձր գնահատական ստացած մասնակցի գինը գերազանցում է գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է այդ մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը

չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքվելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:»:

Կարգի 26-րդ կետի համաձայն. « (...) Գնահատող հանձնաժողովի՝

5) **նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են**, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.»:

Տվյալ դեպքում վերը նշված նորմերով սահմանված է, որ հայտերի բացումից հետո հանձնաժողով **գնահատում է հայտերը**, որից հետո համապատասխան հիմքերի առկայության դեպքում գնահատող հանձնաժողովը ոչ գնային պայմաններին բավարարող մյուս մասնակիցներին տալիս է հրավեր բանակցություններ վարելու շուրջ: Բանակցությունները ձայնագրվում են, որից հետո կազմվում է արձանագրություն:

Սույն գործով Բողոքաբերը 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել է 34 658 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե 34.678.000 ՀՀ դրամ, այսինքն՝ ընտրված մասնակից Ֆյորա Էներջի ՍՊԸ-ից ցածր գին, ինչը հիմնավորվում է ձայնագրությամբ, սակայն հավանաբար վրիպակի արդյունքում Հանձանձողովը եկել է սխալ եզրահանգման և այդ մասով ընտրված մասնակից ճանաչել:

Նման պայմաններում կարող ենք ասել, որ մրցույթը թիվ 5 արձանագրությունը ենթակա է դադարեցման և Բողոքաբերին ընտրված մասնակից ճանաչման:

Պահանջը.

Խնդրում ենք

Պարտավորեցնել ՀԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին մասնակի՝ 2-րդ չափաբաժնի մասով դադարեցնել տվյալ

հայտարարել/ 02.02.2022 թվականի թիվ 5 արձանագրությունը և «Ճին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ին կոնսորցիումով ճանաչել 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից:

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի անդորրագիրը.
2. Պետռեգիստրի վկայականը
3. Տնօրենի նույնականացման քարտի պատճեն
4. Արձանագրությունների պատճենները /4 թերթ/

Հարգանքով

Տնօրեն՝ Արսեն Բարսեղյան